



# ԼԵՈՒՆԱՅԻՆ ՂԱՐԱՎԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 նոյեմբերի 2003թ.

N 330

ք.Ստեփանակերտ

### ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԳՂԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՆՍԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

Հաստատել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեությունների սահմանային չափերը (կցվում է):

**ԼՂՀ վարչապետ**

**Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ**

## Մ Ա Հ Մ Ա Ն Ա Յ Ի Ն Չ Ա Փ Ե Ր

### շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեությունների

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության են ենթակա նախատեսվող այն գործունեությունները, որոնց ցուցանիշները գերազանցում են հետևյալ սահմանային չափերը՝

#### 1. Զիմիական արդյունաբերության ոլորտում՝

լվացող, մաքրող և կենցաղային քիմիայի այլ նյութերի արտադրություն՝ տարեկան 50 տոննա:

#### 2. Մետալուրգիայի ոլորտում՝

մետաղների մակերեսային մշակում՝ տարեկան 2000 քառ. մետր:

#### 3. Էլեկտրատեխնիկական, ռադիոէլեկտրոնային արտադրության ոլորտում՝

գեներատորների արտադրություն՝ տարեկան 500 հատ.  
Էլեկտրաշարժիչների արտադրություն՝ տարեկան 3000 հատ.  
ուժային տրանսֆորմատորների արտադրություն՝ տարեկան 1000 հատ.  
շարժական էլեկտրակայանների արտադրություն՝ տարեկան 300 հատ.  
մարտկոցների արտադրություն՝ տարեկան 1000 հատ.  
Էլեկտրական սարքերի (ռեկտներ, թողարկիչներ և այլն) արտադրություն՝ տարեկան 5000 հատ.  
կիսահաղորդչային սարքերի արտադրություն՝ տարեկան 1000 հատ.  
լուսավորման էլեկտրալամպերի արտադրություն՝ տարեկան 3000 հատ.  
լյումինեսցենտային լամպերի արտադրություն՝ տարեկան 1000 հատ.  
մալուխների արտադրություն՝ տարեկան 1 զծակիլումետր.  
լուսատեխնիկական սարքերի արտադրություն՝ տարեկան 1500 հատ.  
հատուկ տեխնոլոգիական սարքերի արտադրություն՝ տարեկան 1000 հատ.  
բլոկների հանգույցների և պահեստամասերի արտադրություն՝ տարեկան 3000 հատ.

#### 4. Փայտի և թղթի արդյունաբերության ոլորտում՝

նրբատախտակի արտադրություն՝ տարեկան 10 խոր. մետր.  
ատաղձագործական շինարարական իրերի (դուռ, պատուհան և այլն) արտադրություն՝ տարեկան 1000 քառ. մետր.  
կահույքի արտադրություն՝ տարեկան 20 խոր. մետր.  
սովարաթղթի արտադրություն՝ տարեկան 2 տոննա.  
թղթի արտադրություն՝ տարեկան 1 տոննա:

#### 5. Թեթև արդյունաբերության ոլորտում՝

գործվածքների և տրիկոտաժի արտադրություն՝ ամսական 3000 քառ. մետր.  
գուլպեղենի արտադրություն՝ ամսական 5000 գույգ.  
կաշվի արտադրություն՝ ամսական 0.5 տոննա.  
արհեստական կաշվի (այդ թվում՝ սինթետիկ) արտադրություն՝ ամսական 15000 քառ. դեցիմետր.

մորթու արտադրություն (հումքի մշակում)՝ ամսական 1000 քառ. մետր.  
գորգեղենի արտադրություն՝ ամսական 3000 քառ. մետր.  
կարի (ներառյալ մորթեղենի) պատրաստի արտադրանք՝ ամսական 3000 հատ.  
մետաքսի արտադրություն՝ ամսական 1000 քառ. մետր:

#### **6. Մննդի արդյունաբերության և ձկնային տնտեսության ոլորտում**

հրուշակեղենի արտադրություն (պատրաստի արտադրանք)՝ օրական 0.5 տոննա.  
մակարոնեղենի արտադրություն (պատրաստի արտադրանք)՝ օրական 15 տոննա.  
հացի և հացաբուլկեղենի արտադրություն (պատրաստի արտադրանք)՝ օրական 10 տոննա.  
ալյուրի արտադրություն՝ օրական 10 տոննա.  
համակցված կերերի արտադրություն՝ օրական 5 տոննա.  
մսի և մսամթերքի արտադրություն (պատրաստի արտադրանք)՝ օրական 1 տոննա.  
պտուղ-բանջարեղենի պահածոների արտադրություն՝ օրական 2000 պայմանական տուփ.  
կաթնամթերքի արտադրություն (վերամշակված կաթ)՝ օրական 10 տոննա.  
պանրի արտադրություն՝ օրական 10 տոննա կաթի վերամշակմամբ.  
կենդանական և բուսական յուղերի ու ճարպի արտադրություն՝ օրական 0.5 տոննա.  
մարգարիների արտադրություն՝ օրական 1 տոննա.  
շաքարի և շաքարավազի արտադրություն՝ օրական 1 տոննա.  
ոչ ալկոհոլային խմիչքների արտադրություն՝ օրական 1000 դեկալիտր.  
հանքային ջրերի արտադրություն՝ օրական 1000 դեկալիտր.  
գարեջրի արտադրություն՝ օրական 500 դեկալիտր.  
գինու արտադրություն (խաղողի վերամշակում)՝ օրական 50 տոննա.  
շամպայն գինիների արտադրություն՝ օրական 500 շիշ.  
լիկյորի և օղու արտադրություն՝ օրական 1000 դեկալիտր.  
կոնյակի արտադրություն՝ օրական 250 դեկալիտր.  
ձկան վերարտադրություն՝ օրական 10000 ձկնկիթ.  
ձկնամշակման արտադրություն՝ օրական 1 տոննա.  
ձկան պահածոների արտադրություն՝ օրական 2000 հաշվարկային տուփ.  
բնական լվացող միջոցների (օճառ) արտադրություն՝ օրական 1 տոննա.  
ծխախոտի արտադրություն՝ օրական 0.5 տոննա.

#### **7. Քաղաքաշինության ոլորտում**

շենքեր, կառույցներ, համալիրներ և այլն՝ 1000 քառ. մետր կառուցապատման մակերեսով:

#### **8. Գյուղատնտեսության ոլորտում**

աղակալած հողերի բարելավում, ոռոգման և չորացման ցանցերի կառուցում, ճահիճների չորացում, բերրի հողերի պահպանում էրոզիայից, աղակալումից և որակի փոփոխությունից՝ 100 հեկտար.  
աղակալած հողերի բարելավում (քիմիական եղանակով)՝ առանց սահմանային չափի:

#### **9. Ենթակառուցյունների ոլորտում**

ճանապարհների կառուցում (վերակառուցում)՝ 1 կիլոմետր երկարությամբ.  
գազի, նավթի, գոլորշու և ջրատար խողովակաշարեր, կոյուղու կոլեկտորներ՝ 300 միլիմետր տրամագծով.  
էլեկտրահաղորդման գծեր՝ 35 կիլովոլտ լարման.  
վառելանյութի (այդ թվում՝ բնական և այլ գազերի) վերգետնյա ու ստորգետնյա պահեստներ՝ 20 տոննա տարողությամբ.  
քիմիկատների պահեստարաններ՝ 5 տոննա հզորությամբ.  
հանքային պարարտանյութերի պահեստարաններ՝ 10 տոննա հզորությամբ.  
թունաքիմիկատների պահեստարաններ՝ 1 տոննա հզորությամբ:

#### **10. Մասսարկման ոլորտում**

առևտրի կենտրոններ և տոնավաճառներ՝ 5000 քառ. մետր կառուցապատման մակերեսով.  
հյուրանոցային և զբոսաշրջիկային համալիրներ՝ 500 տեղով.  
հանքային սննդի օբյեկտներ (ռեստորաններ, սրճարաններ, ճաշարաններ և այլն)՝ 500 նստատեղով: